331. **Համբարձում Ենֆիաճեանց** նախ ընկերացած է ԳԱԲՐ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑի, ապա ուրիշներու [Հ. Էնֆիաճեանց և Ընկ.]: Ունէր վայելուչ տառեր, ձուլարան, ընտիր տիպ և տեւական գործունէութիւն, որով նմանցուցած է Ներսիսեան տպարանի փայլը: 1860էն հրատարակած է Մ. Աղաբէկեանի **Կռունկ Հայոց աշխարհին**, **Վաճառական** և **Հայկ. Աշխարհ** թերթերը, — երբ առոնցմէ առաջ Թիֆլիզ լոյս կը տեսնէր **Կովկաս** (1844 - 6), Մեղու Հայաստանի (1858) և **Արարատ** (1850 - 1): 1862էն կ'առանձնէ «Մ. Հայաստանի»ի հրատարակութիւնը (*): — Փունջ մը իր տպածներէն. — Բանի մը խօսք Հռովմայ եկեղեցւոյ գլխաւորութեան մասին (1861), Նախաշաւիղ կրթութեան (1862), Պարապ վախտի խաղալիք (Խ. Աբովեան) 1864, Գիշերուան սարըը խեր է, Էս էլ քի Մօգիքլութիւն (1866), Դալալ-Դաշօ, Աւետ. (1867), Հրահանգք քերկն. (1869), Մնկվրժ. նամակներ (1873), Հայկական հնչիւնների մասին, Համառօտ մանկավարժութիւն (1875), Ս. Փէյլքօ (1880) են. են.: — Իր տպարանը փոխանցուած է Ռօտինեանցի, բայց ձուլարանը դադրած է: ☛ Թիֆլիզի մէջ ծանօթ գրաձուլիչ մը եղած է նաև Մառէր անուն Գերմանացին:

332. **Յովհ. Մարտիրոսեանց** (և ընկ.)ի տպածները (1876 - 87). — Գործն. խրատներ, Ժողովածու բուար. խնդիրների, Հայոց մամուլը Ռուսաստանում (Յարոյ), Թաւամազ մեղու, Բերականութիւն (ներ), Երգարան, Երուանդ Բ., Մանկական ոտանաւորներ, Մարդակազմութիւն, Ազարանգեղոս, Արեգնազան, Մահապարտին վերջին օրը, «Աղբիւր» են:

333 - 334. **Կովկասեան (Զ. Գրիգորեանց)** և ԿԵԴՐ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑներու հրատարակածները. — Մայրենի Լեզու (ներ), Բունի ամուսնութիւն (Մօլիէռ.), Գարօի ընտանիքը, Անապատում, Բերականութիւն (ներ) 1875 . . . 88:

335. **Մովս. Վարդանեանց** (և ընկ.)ի տպածները. — Բնախօսութիւն, Բրնական հայեացք, Դիւցազունք ըստ Խորենացւոյ, Բարոյ. վէպ, Ուղեցոյց հայ ուսուցչի, Երկրաչափութիւն, Ինքնաուսուցիչ ռուսերէն լեզուի, են. են. (1881 . . .):

336. “**Արօր**„ Տ. Նազարեանի. — Տպած է Բանաստեղծութիւններ, Վաղարշապատեցի Յ. Ա.ի կեանքը, Եղիշէ (աշխարհաբար), Անահիտ (հին գրոյց), են. են. 1881 . . . :

337 - 340. **Ռօտինեանց**, **Մ. Շարաձէ**, “**Հերմէս**„ թէ՛ առանձնակի և թէ ընկերովի տպած են. — Հառուածական օրացոյց, Հասարակութեան նեցուկները, Գիրք ծղրոց, Բուչակ նահապետի երգերը, Թուարանական խնդիրներ, Կեղէքիչ, Արդարութեան նշանակութիւնը, Կորած մարգարիտ (Ս. Փիլոյեանց), են. են. (1891 . . .):

341. **Մնաց. Մարտիրոսեանց**. — Գիւղատնտեսական գրքոյկներ (Լ. Խաչատրեանց), Ղազար Փարպեցի, եւայլն եւայլն (1898 . . .):

342. **Օր. Ն. Աղանեանց** միա՛կ կինը բոլոր երկիրներու հայ տպագրիչներու մէջէն որուն եկեղեցատիպ Մամուլը կը շարունակէ բոլորել փայլուն գործունէութիւն մը: Յիշենք քանի մը հատ հոն տպուածներէն. — Ռուս. հատընտիր հատուածներ (1906), Ազատութեան խանդ, Տարրական քերականութիւն, **Հայ գրքի տօնը** (1912) Լէօի:

343 - 344. **Թառումեանց**: — **Շաղանեան**. — Դասագիրք ընական պատմութեան (1907), Ձմեռնային հէքեաթ (1910):

345 - 364. **Ռուսաստան եւն. Տպարաններ**. — ԵԱԿՇԱՏԻ, Հայկ. նշանագրեր Ա. տետր (Վ. Լխիցեան) 1877: — Լ. Գ. ԿՐԱՄԱՐԻԿՕ, Գ. Լուսաւորիչ և իւր որդիքը (1886), Դասագիրք ընթերցանութեան (1883): — «ԿԱԻԿԱՍ» Նոր-Դար (1890): — ՏՊ. ԳԼԽ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒ, Տօմար ըստ., Ընծայաբերութիւն Ներսիսեան

(*) Թիֆլիզի թերթերէն կան դեռ Փորձ, Մեկվրժ թերթ, Գ. Արծրունիի **Մշակը** (որուն 40ամեակը տօնուեցաւ այս տարի), Աբգար Յովհաննիսեանի **Արձագանգը** (1882 էն), Նոր-դար (1884 էն), Մուրճ, Տիգրան Նազարեանցի «Աղբիւր»ը, Տարազ, Լումայ. Ն. Խուդոյեանի «Վարժարան»ը, Ազգագրական հանդէս, Արշալոյս, Հորիզոն, Սուրհանդակ, Գեղարուեստ (Գարեգին Լեւոնեան) եւն. եւն.: